Հայ նկարիչներ. Արամ Իսաբեկյան. «Կան մարդիկ, ովքեր իսպառ չունեն արվեստն ընկալելու ունակություն» - «MAMUL.am», 26.09.2017

Այսօր գեղանկարիչ Արամ Իսաբեկյանի ծննդյան 65-ամյակն է: Նկարիչը ծնվել է 1952-ի սեպտեմբեր 26-ին, Երևանում: Գեղանկարիչ Էդուարդ Իսաբեկյանի և գեղանկարչուհի Արփենիկ Նալբանդյանի որդին է:

1982թ-ից նա Հայաստանի նկարիչների միության և ՅՈՒՆԵՍԿՈ-ի նկարիչների միջազգային ընկերության անդամ է: 1994թ-ից Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտորն է: Արամ Իսաբեկյանը համամիտ չէ, որ այսօր արվեստի հանդեպ ուշադրությունն ու հետաքրքրությունը պակասել է: «Նրանք, ովքեր սիրել են մաքուր երաժշտություն, թատրոն ու նկարչություն, հիմա էլ շարունակում են սիրել: Ոչ թե պակասել է ուշադրությունն արվեստի նկատմամբ, այլ կան մարդիկ, ովքեր իսպառ չունեն արվեստն ընկալելու ունակություն, ովքեր չեն էլ իմանում՝ ինչ է արվեստը: Նրանց համար արվեստը տարբեր երևույթներ են, որոնք մեզ համար արվեստ չեն, դա գալիս է դաստիարակությունից»,- MAMUL.am-ի հետ զրույցում ասել է Արամ Իսաբեկյանը:

Նրա ստեղծագործություններից են՝ «Շեփորով նատյուրմորտ», «Նամակ Ամերիկայից», «Արվեստանոցում», «Նվիրում», «Հորս դիմանկարը», «Երազ» և այլն: Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երևանում, Փարիզում, Հալեպում, Կահիրեում, Լոնդոնում: Գեղանկարչի աշխատանքները գտնվում են տարբեր թանգարաններում ու ցուցասրահներում, ինչպես նաև՝ բազմաթիվ անհատական հավաքածուներում: Արամ Իսաբեկյանը 1999-ին պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե, 2001թ.՝ ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալներով: 2002-ին դարձել է բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի իսկական անդամ, ակադեմիկոս: Արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի կոչման:

https://mamul.am/am/news/112230